

մասին, եւ ոչ ալ, թէ ուրկէ՞ քաղած է այս ոտանաւորը. տարիներ վերջը 1881ին՝ Վաղամեռին շ. Արսէն Վ. Սուքրիեան երկրորդ անգամ զՊոլսի ճարտարապետի իմն կը յիշատակէ իւր պարտքին հայ քաջիկան կիսատ գործին մէջ¹: 1881էն մինչեւ անցեալ տարի բան մի հրատարակուած չէր Պոլսի ճարտարապետի վրայ, երբ շ. Ղեւոնդ Վ. Յովնանեան, ձեռք անցընելով ամասիացի Գալուստ Բժշկի մը ձեռագիր բժշկարանը², անոր մէջ քանիցս յիշատակուած գտաւ Պոլսի ճարտարապետ Բժշկին եւ անոր դերերը:

Գալուստ Ամասիացուն այս գործը՝ որ սեպհականութիւն է Վիեննայի Միւլթարեանց մատենադարանին³, կարեւոր Յիշատակարան մըն է, ուրկէ միայն կարելի է մեզ իմանալ, թէ ո՞ր դարու մէջ ապրած է Պոլսի ճարտարապետացի:

Գալուստ Ամասիացի, ըստ շ. Ղեւոնդայ Յովնանեան, իւր բժշկարանը շարադրած է՝ ԺԷ. դարու երրորդ քառորդին, այսինք՝ 1668—69,⁴ հետեւելով՝ բաց ի Ամիրտովլաթէ եւ Ասարէ, նաեւ Սերաստացուն Պոլսի ճարտարապետի, որ հաւանականաբար իրմէ հին բժշկ մըն էր:

Եթէ ենթադրենք, որ 1668ին Պոլսի ճարտարապետ Բժշկին արդէն, որ անհաւանական չէ, կրնանք զինքն համարիլ 16—17րդ. դարու հայ բժշկներէն, մանաւանդ որ շ. Ղեւոնդ Վիշան ալ գրած է առ իւր անուանակիրն շ. Յովնանեան, թէ՛ Պոլսի յիշ. յաթ 1630 խաթմանը քաջիկան ինչ գրող յարաբ. լեզուէ:⁵

1630ին եթէ զՊոլսի ճարտարապետ Բժշկին 55 տարեան համարենք, ծնած կ'ըլլայ 1575ին. եւ եթէ ընդունինք որ ծեր վախճանած է, այսինքն՝ իր 75 տարեան, մեռած կ'ըլլայ 1650ին:

Առանց իրեւ ստոյգ ներկայացընելու այս թուականները, որ նորանոր տեղեկութիւններով կրնան դեռ հետզհետէ լուսաբանուիլ, ներքին է մեզ կարծեմ յաւելուլ, թէ անշուշտ Ամիրտովլաթի մահէն՝ 1497էն շատ եւ շատ տարիներ վերջն է, որ Պոլսի ճարտարապետացի կը պատահի անոր երկասիրութեանց, ձեռք կ'անցընէ անոր Օգոստ Բժշկին հայ քաջիկան, ցայնվայր կորսուած գուցէ եւ փոշեծածուկ միմի անկիւններու մէջ,

որուն հմտալից պարունակութեանը սիրահարուելով, ինչպէս կ'երեւի վերջին յիշատակարանէն, փափաք կ'ունենայ խաւարէն ի լոյս հանել եւ ծանօթացընել հայ բժշկի մը նշանաւոր մէկ երկը, որ հայութեան ամենահեթ ժամանակը, 15րդ դարու մէջ՝ հայ մատենագրութեան ամենագեղ եւ ամենամեծ փառքն էր:

Պոլսի ճարտարապետ Բժշկին ուրեմն լոյս տեսած է «Օգոստ Բժշկութեանը», Պոլսի ճարտարապետի, որ ինքն ալ ոչ նուազ երեւելի բժշկ մ'եղած կ'երեւի, դատելով Գալուստ Ամասիացուն բժշկարանէն¹:

Այսպիսի միայն գրելով Պոլսի ճարտարապետի, փափաքելի է որ նորագոյն տեղեկութիւններ տակաւ աւելի ծանօթացընեն մեզ այս հայ բժշկը, որուն միշտ պիտի պարտական մնանք նաեւ Ամիրտովլաթի կենսագրական յիշատակարանը, զոր կը կարգանք վերը:

Այս կարեւոր տեղեկութիւնները քաղելով Պոլսի ճարտարապետ Բժշկարանէն, աւելորդ կը համարիմ աւելի մանրամասն գրել անոր պարունակութիւնը, զոր արդէն այնչափ հմուտ կերպով գիտնականօրէն բացատրած է բարեյիշատակ շ. Ղեւոնդ Վ. Յովնանեան, իւր Հեռագրութեան նախնայ Պոլսի ճարտարապետ Բժշկին աշխատանքներէն մէջ:

Բերս, Կ. Պոլս, 19 Յունուար 1899:

Տոթ. ՎԱՅՐԱՄ. Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ

ԳՐԱԿԱՆ

ԽԻԿԱՐ ԵՒ ԻՐ ԻՄԱՍՏԱՆԻԹԻՒՆՆ

(Հրատարակուած է):

Խիկարի պատմութեան գոնէ երկու գլխաւոր անձինք ըստ այսմ նախնականին կը վերաբերին՝ գտնուելով արդէն Տովրիթայ քով յիշատակուած: Միւս կողմանէ Տովրիթայ գիւղէն աւելի լաւ պիտի հասկըցուի այսուհետեւ՝ Խիկարայ պատմութեան համեմատութեամբ. որովհետեւ՝ վերը յիշուած՝ պէտքէս խմբագրութեանց եւ օրինակաց բաղմանի աղաւաղմանը, ընթերցմանց տարբերութիւնք առով կրնան ճշգրտուիլ, որով նաեւ Սինայականին ընթերցմանց ճշգրտութիւնը հաստատուիլ: — Խիկարի պատմութեան գլխաւոր անձինքն են՝

«Խիկար» հայերէնին համեմատ, ամենէն կարեւոր դէմքն է պատմութեան: Վէպին ասորեւ-

¹ Բաղմանայ 1881, էջ 34:

² Հետազոտութիւնք նախնայ Պոլսի ճարտարապետի վրայ, Մասն Ա, տետր. Բ., էջ 468—490:

³ Տուրքի Զեռագրաց Մատենադարանի Հարց Միւլթարեանց ի Վիեննայ, 1895 էջ 1011—1013:

⁴ Հետազոտութիւնք նախնայ Պոլսի ճարտարապետի վրայ, Մասն Բ, Վիեննայ 1897, էջ 468:

⁵ Անդ. Մասն Բ. էջ 487:

¹ Անդ. էջ 468:

² Հայերէնին համար կ'ըսէ Հարիս (որ Khikar կը գրէ, տես էջ ԻԷ) թէ «չի միտքանի լիովին յիշուած ամեն ձեւերուն հետ» սակայն հայը յայտնապէս ասորի «Սիկար» ձեւէն է՝ սկզբնատառին ինքնալիք: